ՓՈՐՁԱՇՐՋԱՆ

5 հարցերի կարճ պատասխաններ

1 Ի՞նչ է փորձաշրջանը:

Փորձաշրջանը այն **ժամանակահատվածն է,** որը նախատեսված է տվյալ աշխատանքին կամ պաշտոնին աշխատողի **համապատասխանությունը ստուգելու/որոշելու համար:** Փորձաշրջանը կարող է սահմանվել գործատուի կողմից, աշխատողի ցանկությամբ կամ կողմերի փոխադարձ համաձայնությամբ աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակ: Ընդ որում, փորձաշրջանի մասին պայմանները սահմանում են **աշխատանքային պայմանագրով** և այդ ժամանակահատվածում աշխատողն ունի օրենսդրությամբ իրեն տրված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

2 Որքա՞ն է տևում փորձաշրանը:

Երեք ամիս, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ հատուկ նախատեսված դեպքերի, երբ փորձաշրջանը կարող է սահմանվել **մինչև տասներկու ամիս ժամկետով:**

3 Ո՞ր դեպքերում փորձաշրջան առհասարակ չի կարող նախատեսվել:

Փորձաշրջան չի կարող նախատեսվել, եթե աշխատանքի են ընդունվում՝

ա) **տասնութ տարին չլրացած անձինք** կամ մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող սովորողները,
բ) **ընտրովի պաշտոն զբաղեցնողները,** ինչպես նաև պաշտոնի նշանակման համար որակավորման քննություններ հանձնած կամ գործատուի մոտ կամ գործատուի նախաձեռնությամբ այլ վայրում ուսուցում անցած անձինք,
գ) գործատուների փոխադարձ համաձայնությամբ այլ աշխատանքի փոխադրվող անձինք,
դ) **օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:**



4 Ինչո՞ւ է կարևոր ուշադրություն դարձնել, թե ում կողմից է սահմանվել փորձաշրջանը:

Եթե փորձաշրջանը **սահմանվել է գործատուի կողմից,** ապա փորձաշրջանի արդյունքները գնահատում է գործատուն: Հետևաբար, եթե փորձաշրջանի արդյունքներով աշխատողը չի համապատասխանում աշխատանքին կամ պաշտոնին առաջադրված պահանջներին, ապա գործատուն կարող է աշխատանքից ազատել աշխատողին՝ այդ մասին **3 օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան:**

Եթե փորձաշրջանը սահմանվել է **աշխատողի կողմից,** ապա փորձաշրջանի արդյունքները գնահատում է աշխատողը: Հետևաբար, փորձաշրջանի ընթացքում աշխատողն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը՝ այդ մասին **3 օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին:**

Եթե փորձաշրջանը սահմանվել է **կողմերի փոխադարձ համաձայնությամբ,** ապա և՛ աշխատողը, և՛ գործատուն իրավունք ունեն փորձաշրջանի ժամկետում լուծելու աշխատանքային պայմանագիրը՝ **նախապես 3 օր առաջ ծանուցելով մյուս կողմին:**

5 Ի՞նչ է տեղի ունենում, երբ փորձաշրջանի ժամկետից հետո աշխատողը շարունակում է աշխատել:

Այդ պարագայում նա համարվում է **փորձաշրջանն անցած,** կնքված աշխատանքային **պայմանագրի գործողությունը շարունակվում է,** և գործատուն կարող է նրա հետ աշխատանքային պայմանագիրը լուծել միայն աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերով: